

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն 3, 2014

Геология и география

Երկրաբանություն

УДК 553.411

**ՔՐՈՍԻՏԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ
ԱռԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՎԱՆԻ ՕՖԻՈԼԻՏԱՅԻՆ
ՀԻՊԵՐԲԱԶԻՏՆԵՐԻ ՊՐՈՏՐՈՒԶԻՎ ԶԱՆԳՎԱԾՆԵՐՈՒՄ**

Հ. Պ. ԳՈՒՅՈՒՄԶՅԱՆ¹, Շ. Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ^{1*}, Ի. Վ. ԲԱԴՈՅԱՆ²

¹ ԵՊՀ ռեզիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և
օգտակար հանածոների հանքավայրերի ամրիոն, Հայաստան

² ԵՊՀ օգտակար հանածոների հանքավայրերի որոշման
և հետախուզման ամրիոն, Հայաստան

Սևանի օֆիոլիտային գոտու հիպերբազիտային զանգվածներն առաջանում են երկու էտապի ընթացքում: Առաջին էտապում՝ երկրակեղևի ենթակեղևային խորություններում կամ վերին մանրիայում ստրատիֆորմ տիպի դիֆերենցված շերտավոր խնորուզիվ զանգվածների նման տեղի է ունեցել պերիլոտիտային հալոցքի բյուրեղացումը: Երկրորդ էտապում՝ խորքային բեկվածներով տեղի է ունեցել կրնակիդագած զանգվածների ներքափանցումը երկրակեղևի վերին հորիզոնները՝ ալպինոտիալ ծալքավորման մեզոգոյան ստրոկուլաներում: Դունիտ-հարցրուրգիտների շերտավոր և զոլավոր ստրոկուլուրաները պյուտրուզիվ ներդրման և ոժգին սերպենտինացման ընթացքում չեն պահպանվել, իսկ քրոմիտների հանքային մարմինները բեկրատվել, մեկուսացվել են միմյանցից և ցրվել տեկտոնացված հիպերբազիտներում: Հիպերբազիտների և զանգվածների քրոմիտների հանքանյութերի տեկտոնական բրոկները, որոնք խորքային բեկվածներով պոլվել և տեղաշարժվել են պյուտրուզիվ ներդրման ընթացքում, ավելի մեծ մարմինների ռեկլիտներ են և նրանց տարածական տեղայնացման վերաբերյալ որևէ օրինաչափություն գտնելը գործնականում անհնար է:

Keywords: chromite, segregational and hystermagmatic deposits, protrusive hyperbasites.

Ալպինոտիալ հիպերբազիտների հետ ծագումնաբանական և տարածական կապի մեջ են որոշակի օգտակար հանածոներ: Դրանցից առաջնայինը, հիմնականում դունիտներին և պերիլոտիտներին հարող՝ քրոմիտներն են:

Երկրակեղևում հայտնի են հիպերբազիտների երկու տիպի ասոցիացիա, որոնց հետ կապված են քրոմիտի և այլ մետաղների (Pt, Pd, Ni, Co) հանքավայրեր: Առաջինը՝ ալպինոտիալ հիպերբազիտներն են, որոնք տարածված են ալպիական ծալքավոր մարգերում, մասնավորապես օֆիոլիտային գոտիներում: Երկրորդը՝ գտնվում է ստրատիֆորմ համալիրների մեջ, որոնք տարածված են հիմնականում պլատֆորմներում, բաղկացած են գերիհմքային և հիմքային ապարների ոիթմիկ դիֆերենցված շերտներից:

* E-mail: sh_khach@ysu.am

Ալպինոտիպ հիպերբազիտները զարգացած են էվգենովինկինալային տիպի համակարգում, ինչպիսին է Սևան–Հազարովի օֆիոլիտային գոտին, իսկ առատիքորմ, դիֆերենցված ոիքմիկ շերտավորված հիմքային-գերիմքային ապարները տարածված են պլատֆորմներում, հազվադեպ նաև ծալքավոր մարգերում (Կեմափիրսայի զանգվածը հարավային Ուրալի հերցինիտներում): Հիմնական ապարների կազմը՝ դունիտներ, պերիդոտիտներ, գաբրոիդներ նույնն է երկու տիպի ասոցիացիաներում:

Ուշագրավ է, որ երկու գերիմքային ասոցիացիայի ապարների համար բնորոշ է քրոմիտի հանքայնացումը: Ավրիկական պլատֆորմում տեղայնացված Բուշվելիի լոպոլիտը ստրատիֆորմ համալիրների նախատիպն է, իսկ Կեմափիրսայի քրոմիտակիր հիպերբազիտների դիֆերենցված զանգվածը նախատիպ է ծալքավոր մարգերի: Սևան–Հազարովի հիպերբազիտները քրոմիտի հանքավայրերու (Շորժա, Զիլ), օֆիոլիտային գոտիների շիփերենցված պրոտրոլիկ զանգվածների օրինակներ են:

Սևանի օֆիոլիտային գոտու Զիլ–Քարախաչի և Շորժայի զանգվածների հիպերբազիտները պատկանում են դունիտ–հարցրուրգիտային ֆորմացիային, որը հիմնավորվում է զիխավոր և տարածված ապարների կազմով՝ դունիտներ և հարցրուրգիտներ: Այս ապարները տարբեր աստիճանի սերպենտինացված են, բայց մեծ մասամբ վերափոխվել են լրիվ սերպենտինիտների: Լերցոլիտները և վերլիտները, որոնք մտնում են պերիդոտիտների կազմի մեջ գործնականում բացակայում են կամ հանդիպում են շատ հազվադեպ:

Դունիտների և հարցրուրգիտների տարածումը Զիլ–Քարախաչի դայլկաձև զանգվածում չի ենթակվում որևէ օրինաչափության: Դաշտային հետազոտությունների ընթացքում զոլավոր կամ շերտավոր տեքստորաներ դունիտների և հարցրուրգիտների միջև չեն երևում: Որևէ զոլավորություն (ուղղաձիգ, թեր կամ հորիզոնական) բնորոշ չէ Զիլ–Քարախաչի և Շորժայի հիպերբազիտային զանգվածների ներքին կառուցվածքների համար:

Սևան–Հազարովի օֆիոլիտային գոտու հիպերբազիտներում զոլավորության բացակայությունը դունիտների և հարցրուրգիտների միջև պայմանավորված է Զիլ–Քարախաչի զանգվածի պրոտրոլիկ բնույթով և համատարած սերպենտինացումով: Անհրաժեշտ է նշել, որ համատարած սերպենտինացումը կանաչ թերբաքարային ֆացիայում “ջնջել” է ամեն տիպի զոլավորություն և կոնտակտային սահմաններ դունիտների և հարցրուրգիտների միջև: Բացի այդ հիպերբազիտների ներդրումը ուղղինալ խորքային բեկվածքներով պրոտրուզիաների ձևով նույնպես ոչնչացրած կիմնի առաջնային ոիքմիկ զոլավորությունը և շերտավորումը, որոնք հավանաբար պետք է ստեղծված լինեին պերիդոտիտային մազմայի դիֆերենցման շնորհիվ ենթակեղևային խորություններում:

Դունիտ–հարցրուրգիտային ֆորմացիայի հիմնական օգտակար համածոն քրոմիտն է: Կան նաև նիկելի և նազմեզիտի դեռևս չենտախոզված հանքանյութեր:

Հիպերբազիտները քրոմիտային հանքանյութերի մայրական ապարներն են, որոնց զանգվածները օֆիոլիտային գոտում հանդես են գալիս ձգված, երկար դայլկաձև, ոսպնյակաձև, սալիկանման մարմինների ձևով միշտ ներդաշնակ ուղղինալ ստրոկոտորային պլանին: Սակայն նրանց ներքին կառուցվածքում բացակայում է որևէ ուղղագիծ զոլավորություն զուգահեռ ներփակող ապարների ստրոկոտորաներին: Զիլ–Քարախաչի զանգվածում բացակայում են կամ դեռևս բացահայտված չեն հանքային մարմինների ծանրակշիռ շլիներ, ոսպնյակներ, երակներ և քրոմիտների շերտավոր հիպերենցված Բուշվելիի և Մեծ Դայկայի տիպի մարմիններին ինչպես նաև Կեմափիրսայի քրոմիտակիր զանգվածի համար:

Սևան-Հազարուի դումիտ-հարցրուզիտային ֆորմացիայի ապարներում հայտնի են քրոմիտի հանքայնացման բազմաքիլ հանքաերևակումներ և մի քանի փոքր հանքավայրեր, որոնք առայժմ հեռանկարային չեն և արդյունաբերական նշանակություն չունեն:

Զիլ-Քարախաչի հիպերբազիտների սահմաններում հայտնի են քրոմիտի սեղբեզացիոն հանքային երևակումներ՝ Փամբակի գետի միջին հոսանքում, Տանձուտի միջազետքում, Ուղերքարի լեռնազագարի արևելյան լանջերում: Հավանաբար կան նաև հիստերոնազմայական հանքայնացման հետքեր: Բայց այլուրուզիկ զանգվածներում քրոմիտի տարրեր տիպի հանքային կուտակների (շերտերի, ոսպնյակների, երակների) հատվածները (բեկորները) երկրակեղևի վերին, մերձմակերևութային հարկերում գտնվում են երկրորդային տեղադրման վայրում: Սևանի օֆիոլիտային գոտու քրոմիտի սեղբեզացիոն և հիստերոնազմայական հանքային կուտակները ձևավորվել են ենթակեղևային կամ երկրակեղևի մեծ խորություններում հիպերբազիտների բյուրեղային դիֆերենցման ընթացքում պերիդոտիտային առաջնային մագմայական հալոցքներից:

Քրոմիտի վաղ մագմայական կամ սեղբեզացիոն հանքավայրերն առաջանում են մագմայից քրոմիտի հատիկների վաղ բյուրեղացման հետևանքով, որոնք հիպերբազիտների մեջ առաջացնում են ցան և շլիրներ: Քրոմիտի հարուստ ցանով և շլիրներով տեղադրման հանքազորկ ներփակող ապարների հետ ունեն աստիճանական անցումներ: Բացի այդ Զիլ-Քարախաչի սերպենտինացված դումիտ-հարցրուզիտների անխտիր պարունակում են քրոմիտի և քրոմշպինելիոնի ակցեսոր միներալներ սովորաբար 1–5%, իսկ առանձին դեպքերում ակցեսոր քրոմիտի միներալների քանակությունը հասնում է 30–40, երեսն 75%-ի: Սա արդեն հանքային դումիտներ են կամ պերիդոտիտներ սեղբեզացիոն հանքայնացումով:

Բացի ցանային հանքայնացումից քրոմիտի բյուրեղները վաղ բյուրեղացման և գրավիտացիոն դիֆերենցման շնորհիվ զանգվածների հատակամերձ մասերում կարող են առաջացնել քրոմիտի շերտաձև կուտակների զանգվածեղ խոշոր մարմիններ: Քրոմիտի նման շերտավոր կուտակներ տարածված են հարավային Աֆրիկայի Մեծ Դաշկայում և Բուշվելյ լոպուխտի ողբանիկ-շերտավոր հիմքային-գերիիմքային ապարների հանալիքում: Պրոտորուզիվ հիպերբազիտային Շորժայի և Զիլ-Քարախաչի տիպի զանգվածներում շերտային նման կուտակների առկայությունը անկասկած բացառվում է, քանի որ այս զանգվածները և նրանց մեջ տեղայնացված տարրեր ձևի և չափերի հանքային մարմինները գրտնվում են երկրորդային տեղադրման վայրերում:

Այս երևոյթը հատակ արտահայտված է Շորժայի հանքավայրի 3-րդ տեղամասի սահմաններում անկանոն ցրված քրոմիտային զանգվածեղ հանքանյութի թեկորմների ձևով, ինչպես նաև Զիլ գյուղից հարավ կին հանքահորի շրջակայքում:

Քրոմիտի հանքային կուտակների տեղայնացման որևէ օրինաչափություն Շորժայի հանքադաշտում չնկատվեց XX դարի 50–60-ական թվականների հետախուզական աշխատանքների ընթացքում: Սեղբեզացիոն հանքային շերտային կուտակները հիպերբազիտային ինտրուզիայի հատակամերձ հատվածներում պետք է ձևավորված լինեն երկրակեղևի մեծ խորություններում մագմայական զանգվածի բյուրեղային դիֆերենցման շնորհիվ: Բնականաբար կոնսոլիդացված հիպերբազիտային զանգվածի պրոտրուզիվ ներդրման ընթացքում քանդվելու, խախտվելու են հիպերբազիտների առաջնային տեքստորիաները և քրոմիտի շերտային, ոսպնյականման և դայլանման մարմինները: Երկրակեղևի մեծ և ենթակեղևային խորություններում քրոմով հարուստ գերիիմքային մագմայի բյուրեղային դիֆերենցումը հավանաբար պետք է կատարված լինի ստրատիֆորմ համալիրների զանգվածների նման:

Հիստերոմազմայական ստաղիայի քրոմիտի համար բնորոշ են երակային և ոսպնյակածև հանքային մարմիններ, որոնք հատում են դրոմիտներին և պերիլոտիտներին, տեղադրվելով նրանց մեջ:

Հանքային երակներում սովորաբար հանդիպում են քրոմիտային հանքանությունը գենենտացված դրոմիտների բնկորներ, որը վկայում է հանքայնացման հիստերոմազմայական ստաղիայում առաջանալու մասին:

Զիլ-Ըարախաչի զանգվածի ամբողջ տարածքում Տանձուտ, Շամփուր, Փամբակ և Դարանակ գետերի հովիտներում դաշտային հետազոտությունների ընթացքում հանդիպում են զանգվածեղ քրոմիտի տարրեր չափի բնկորներ, որոնք վկայում են շերտաձև կուտակների, երակածև ոսպնյակածև մարմինների առկայության մասին: Սակայն պրոտրոլիկ զանգվածների սահմաններում հայտնաբերված այս փաստերը կարող են վկայել հիպերբազիտային զանգվածներում հանքային մարմինների գոյության մասին միայն ենթակեղևային խորություններում և անցյալի իրադրության մասին մինչև պրոտրոլիկիանների վերելքը երկրակեղևի մերձմակերևությային հորիզոնները:

Փամբակի միջին հոսանքում նրա աչ ափերին հանքառուների և հանքահորերի փորբաժներում հստակ երևում են քրոմիտի նուրբ թելանման երակիկները, շլիրները, ցանք նոսր և խիտ կուտակումները սերպենտինիտներում:

Զիլ-Ըարախաչի զանգվածի երկրաբանական-պետրոգրաֆիական հետազոտությունները ցույց տվեցին, որ քրոմիտները և քրոմշախնելիդները ակցեառը զլիսավոր և միակ միներալներն են դունիտ-հարցբորգիտային ֆորմացիայի ապարների:


Հիպերբազիտներում բնորոշ չեն քրոմիտի խորանարդային սինգոնիային պատկանող բյուրեղային կտրվածքները: Սովորաբար տարածված են ուռուցիկ, գոգավոր, աղեղածև եզրագծերով, նաև ուղղանկյունածև, շատ անկանոն, սեպածև բյուրեղներ:

Քրոմիտի հարուստ ցանով սերպենտինիտների մեջ սովորական են որդանման, հատվածառատանիների նման ազրեգատներ կամ առանձին բյուրեղներ: Հաճախ հիպերբազիտների քրոմիտները և քրոմշախնելիդները ծեղքավորված են, որոնք լցված են սերպենտինով: Սակայն հանդիպում են քրոմիտի բյուրեղներ սերպենտինի հզոններիկ, ներփակումներով: Հավանաբար սերպենտինի այս ներփակումները նախկին օլիվինի բյուրեղներ են, որոնք քրոմիտներից ավելի վաղ են բյուրեղացել: Քրոմիտի բյուրեղներով և ազրեգատներով հարուստ հատվածներում սերպենտինը գտնվում է նրանց արանքներում և հիշեցնում է տիտանումազնետիտային օլիվինիտների սիներոնիտային ստրոկտուրան: Փաստորեն սա վաղ բյուրեղացող քրոմիտի՝ սեղբեզգացիոն ստաղիայի, հատիկներ են և նրանցից համեմատաբար ուշ բյուրեղացող օլիվինի քսենոնորֆ բյուրեղները, որոնք շաղկապում են հանքային միմերալները:

Քրոմիտի ցանային տեքստուրաները, քսենոնորֆ բյուրեղների և ազրեգատների բացակայությունը ավելի վաղ բյուրեղացված օլիվինի և էնստատիտի հատիկների միջև (սիներոնիտային ստրոկտուրայի նման) վկայում է քրոմիտի և զլիսավոր ապար կազմող միներալների պարագենետիկ հարաբերության մասին, նրանց առնվազն միաժամանակյա բյուրեղացման մասին հալոցքից: Սակայն քրոմիտով հարուստ կամ խիտ ներփակումնային և համատարած կուտակումների դեպքում բացահայտ երևում է քրոմիտի ավելի վաղ բյուրեղացում: Այս դեպքում սերպենտինը քրոմիտի բյուրեղների արանքներում է տեղադրվում: Քրոմիտի հալոցքից ավելի ուշ բյուրեղացման միանշանակ փաստերը (քրոմիտի երակներ, ոսպնյակներ, սիներոնիտային ստրոկտուրա) Զիլ-Ըարախաչի հիպերբազիտներում չեն երևում: Սակայն նրանց գոյությունը ենթադրվում է երկրակեղևի մեծ խորություններում հալոցքներից բյուրեղանալիս մինչև պրոտրուզիվ ներդրումը:

Քրոմով հարուստ պերիդոտիտային հալոցքներից առաջինը բյուրեղանում է քրոմիտը (նկ. 1): Սա հաստատվում է սերպենտինի ինտերստիցիոն զարգացումով քրոմիտի բյուրեղների միջև: Բնականաբար քրոմիտի ցածր պարունակության դեպքում քրոմիտը օլիվիններից և էնստատիտներից ավելի ուշ է բյուրեղանում կամ հավանաբար միաժամանակ:

Ակցեսոր քրոմիտը և քրոմշափինելիդները տարածված են միայն հիպերբազիտային համալիրի ապարներում, ինչպես նաև նրանց հետ ծագումնաբանական առնչություն ունեցող մագնայական կարրոնատիտային զանգվածներում: Հանրահայտ է, որ կարրոնատիտների շտորները և դայկաները տեղադրված են միայն հիպերբազիտների սահմաններում: Գաբրոիդային համալիրի ապարների մեջ քրոմալիդը ակցեսոր միներալները խսպան բացակայում են չնայած գաբրոիդները տարածված են ոչ միայն հիպերբազիտների զանգվածներից դուրս, այլև նրանց սահմաններում նույնպես: Ակցեսոր քրոմիտների կոնցենտրացիան հիպերբազիտներում սովորաբար գտնվում է 1–5% սահմաններում, որոշ դեպքերում բարձրանում է և հասնում է մինչև 30–40%-ի հազվադեպ նաև 60–70%-ի: Ակցեսոր քրոմիտների քանակությունը պայմանավորված չէ օլիվինի քանակությամբ հիպերբազիտների մեջ: Բացի այդ սերպենտինացումը որևէ ազդեցություն չունի քրոմշափինելիդների քանակության վրա: Այսպես Դարանակի հովտում սերպենտինիտները պարունակում են 15% քրոմիտ և քրոմշափինելիդների բյուրեղային հատիկներ (նմ. Հ. 163), իսկ կարրոնատացված մեկ այլ նմուշի մեջ (նմ. Հ 163) այս ակցեսորների քանակությունը 25% է:




Նկ. 1. Քրոմշափինելիբային սերպենտինիտ (սախտակ գոյաց) տեղադրված էրոմշափինելիդների բեկորների միջև: Շլֆ 60, առանց անալիզատորի, $d=5$ մմ:



Քրոմիտի և քրոմշափինելիդների ակցեսոր միներալների բարձր պարունակությունները դիտարկվում են Փամբակի միջին հոսանքում ջրառատ երեք վտակների գետաբերանների հանգույցների տարածքում (նմ. Հ. 157՝ 40%, Հ. 355՝ 32%, Հ. 353՝ 6%), Շամփուրի միջին հոսանքում, Փամբակի վերին հոսանքում, քրոմշափինելիդների քանակությունը 25% է (նմ. Հ. 163) (նկ. 2): Քրոմիտի և քրոմշափինելիդների բարձր պարունակությունները ցանի տեսքով դիտարկվում են նաև Հավասարադիմ (Դարանակի) միջին հոսանքում, սեմոնի կրաքարերի և սերպենտինացված դունիտների կոնտակտի մերձակայքում (նմ. Հ. 406՝ 15%, Հ. 407՝ 12%), Փամբակի վերին հոսանքում, նրա ձախ վտակներից մեկի ձախ լանջի վրա (նմ. Հ. 331՝ 10%) 2431.0 բարձունքի շրջակայքում, նաև և այլն:

Այսպիսով, Աւանի օֆիտիտային գոտու, մասնավորապես, Զիլ-Քարախսաչի սերպենտինացված դունիտների և հարցրուրգիտների մասին երկրաբանական-պետրոգրաֆիական տվյալները հիմնավորում են քրոմիտի հանքայնացման սեզրեզացիոն և հիստերոմագմայական ծագումնաբանական տիպերին պատկանելիությունը:

Սեղբեզացիոն կամ վաղ մազմայական տիպը ներկայացված է քրոմիտի բյուրեղների ներփակումներով (ցանով) (նկ. 3), ինչպես նաև անկանոն եզրագծերով, թելանման բարակ երակիկներով և շլիներով սերպենտինիտների և սերպենտինացված հիպերբազիտների մեջ: Մանրադիտակի տակ հստակ երևում է սերպենտինացված օլիվինի բյուրեղների ներքափանցումը ավելի վաղ բյուրեղացած քրոմիտի ազրեզատների մեջ: Սեղբեզացիոն քրոմիտի հանքայնացմանը պատկանում են Զիլ-Քարախաչի և Շորժայի հիպերբազիտների երակիկա-ցանավոր տեղամասերը, որոնք չնայած զգալի ծավալների այժմ արդյունաբերական հետաքրքրություն չեն ներկայացնում:



Նկ. 2: Քրոմիտային սերպենտինիտ (քրոմիտային հանքաքար): Քրոմիտը հանդես է զալիս բանոմնորֆ, օվալաձև, որդանման հատիկներով սերպենտինի (սպիտակ գունը) ազրեզատների մեջ: Քրոմիտի հատիկները հատվում են վերանստեցված, վերաբյուրեղացված սերպենտինի թելանման երակիկներով: Ծլիֆ 157, առանց անալիզատորի, $d=5$ մմ:



Նկ. 3: Քրոմիտային սերպենտինիտ (քրոմիտային հանքաքար): Քրոմիտի ուղանկյունաձև հատիկները հատվում են վերանստեցված, վերաբյուրեղացված թե, անման երակիկներով: Ծլիֆ 355, առանց անալիզատորի, $d=5$ մմ:



Նկ. 4: Սերպենտինացված հարցբուրզիտ:

Ակցեսոր քրոմիտի եռանկյունաձև հատիկը սերպենտինացված օլիվինի մեջ: Ծլիֆ 480, առանց անալիզատորի, $d=5$ մմ:

Հիսութերումազմայական կամ ուշ մազմայական քրոմիտի հանքայնացումն առաջանում է քրոմով հարուստ պերիոդուստային մազմայի գլխավոր զանգվածի բյուրեղային դիֆերենցումից հետո շերտանման, երականման և ոսպնյականման հանքային մարմինների առաջացումով, որը տեղի է ունենում հիպերբազիտների կայացման առաջին էտապում ենթադրաբար ենթակեղևային խորություններում կամ վերին մանթիայում:

Սևանի օֆիոլիտային գոտու հիպերբազիտներում քրոմիտի հանքային մարմինների դրսւորնան առանձնահատկությունները հասկանալու համար անհրաժեշտ է տարբերել նրանց կայացման երկու երկրատեկունական իրադրությունները, որոնք բխում են երկրաբանական-պետրոգրաֆիական դաշտային հետազոտություններից՝ այն է ենթակեղևային խորություններում առաջնային պերիոդուստային մազմայի դիֆերենցումը և այսուհետև կոնսոլիդացված զանգվածների տեկունական ներքափանցում խորքային բեկվածքներով գեռսինկլինալային առաջացումների՝ վերին կավճի, ստրուկտորաների մեջ: Դունիտ-հարցբուրգիտային զանգվածները տեկունական բլոկներ են և իրականում ուղիկուններ են հիպերբազիտների ավելի մեծ զանգվածների, որոնց տեղաշարժը տեկունական սեղման պայմաններում ուղեկցվել է նրանց ուժգին դեֆորմացումով և կատակլազով, իսկ երկրակեղևի վերին հորիզոններում՝ կանաչ բերբաքարային ֆացիայում նաև սերպենտինացումով: Հիպերբազիտային զանգվածների պրոտոլիվ բնույթով է պայմանավորված նրանց մեջ ներդաշնակ տեղայնացված հանքային շերտային կուտակումների բացակայությունը: Զանգվածեղ հոծ քրոմիտի հանքանյութերի անկանոն ցրված բեկորների տարածումը, ոիքմիկ զոլավորության և շերտայնության բացակայությունը հանքանյութերի և հիպերբազիտային ապարների միջև, վկայում է, որ այս մարմինների տեղայնացումը երկրորդային է մեզոզոյան ստրուկտորաներում և հետևանք է նրանց պրոտրոլիվ, տեկունական ներդրման: Սևանի օֆիոլիտային գոտու հիպերբազիտների կայացման երկու հիմնական էտապների մասին նշել են՝ Փալանջյանը, Կնիպերը և Աղամալյանը [1–3]:

Քրոմիտակիր հիպերբազիտների մանքայիտակային հետազոտությունները հաստատում են, որ քրոմիտը կարող է հանդես գալ ավելի վաղ (նկ. 4), կամ ավելի ուշ գլխավոր ապար կազմող միներալներից՝ օլիվինից և էնստատիտից: Այսպես Շորժայի հանքադաշտի զանգվածեղ և հոծ քրոմիտի հանքանյութերում երևում է բեկորատված դրոնիտների ցեմենտացումը քրոմիտի հանքանյութով:

Միևնույն ժամանակ դիստարկվում է նաև ինստերաստիցիոն սերպենտինացված օլիվինի կամ սերպենտին քրոմիտի ցանով հարուստ տեղամասերում: Բացի այդ կարելի է հաստատել, որ երակիկա-ցանային և զանգվածեղ հանքանյութերի քրոմիտը բյուրեղանում է հալոցքից միանույն փուլում օլիվինից և էնստատիտից հետո: Սա երևում է Շորժայի և Զիլ-Քարախսաչի քրոմիտակիր հիպերբազիտների դաշտային, երկրաբանական և մանքայիտակային պետրոգրաֆիական հետազոտությունների հիման վրա: Այս կարծիքին են նաև Ուրալի քրոմիտակիր հիպերբազիտների շատ հետազոտողներ, օրինակ՝ Տատարինովը, Պավլովը, Մուկալևան [4–6]:

Եթե կայուն մարգերի ստրատիֆորմ զանգվածները (Բուշվելի, Մեծ Դայլա, Ստիլուտեր) պահպանում են ապարազանգվածների և հանքանյութերի մարմինների առաջնային տեղադրման բոլոր առանձնահատկությունները, ապա ծալքավոր մարգերում, ինչպիսին է Սևանի օֆիոլիտային գոտին, քրոմիտակիր հիպերբազիտներն ունեն միայն երկրորդային տեղադրություն: Մարգի գեռսինկլինալային զարգացումը նպաստում է դրոնիտ-հարցբուրգիտների և նրանց մեջ տեղադրված քրոմիտային մարմինների ամբողջականության խախտման, բեկորատման, ինչպես այն հաստատվում է քրոմիտակիր զանգվածների պրոտրոլիվ ներդրման

դեպքում խորքային բեկվածքներով: Շորժայի հանքային դաշտի 3-րդ տեղամասի հանքային մարմինները իրենցից ներկայացնում են տեկտոնական բլոկներ, որոնցից յուրաքանչյուրը ավելի մեծ մարմնի մաս է բեկորատված և քաշրշաված տեկտոնական խախտումներով: Հանքային մարմինների ամբողջականության խախտումը և բեկորատումը նպաստում է կույր հանքային կոնցենտրացիաների առաջացմանը, որը դառնում է որոնման և հետախուզման համար բարդ խնդիր: Սրանով է բացատրվում նաև հանքային մարմինների և բեկորների փոքր չափերը և քանակությունը Աևանի օֆիոլիտային գոտու տարածքում:

Մտացվել է 16.01.2014

ԳՐԱԿԱՆ ԲԹՅՈՒՆ

1. **Паланджян С.А.** Петрология гипербазитов и габброидов Севанского хребта. Ер.: Изд-во АН Арм. ССР, 1971, 200 с.
2. **Книппер А.Л.** Океаническая кора в структуре Альпийской складчатой области. М.: Наука, 1975, 208 с.
3. **Агамалиян В.А., Лорсабян Т.К.** Нормативная количественно-минералогическая классификация ультрамафитов мезозойских офиолитов Армении. // Ученые записки ЕГУ. Геология и география, 2010, № 1, с. 11–18.
4. **Татаринов П.М., Красновский Г.М.** Алапаевская интрузия ультраосн. пород на Урале и ее месторождения хромистого железняка. Труды ЦНИГРИ. М.-Л., 1940, вып. 120, 180 с.
5. **Павлов Н.В., Кравченко Г.Г., Чупрынина И.И.** Хромиты Кемпирсайского массива. М.: Наука, 1968, 210 с.
6. **Москалева С.В.** Гипербазиты и их хромитоносность. Л.: Недра, 1974, 279 с.

О. П. ГЮМДЖЯН, Ш. В. ХАЧАТРЯН, И. В. БАГОЯН

ПРОИСХОЖДЕНИЕ ХРОМИТА И ОСОБЕННОСТИ ЗАЛЕГАНИЯ ОРУДЕНЕНИЯ В ПРОТРУЗИВНЫХ ДУНИТ-ГАРЦБУРГИТОВЫХ МАССИВАХ СЕВАНСКОЙ ОФИОЛИТОВОЙ ЗОНЫ

Резюме

Гипербазитовые массивы Севанской офиолитовой зоны формировались в результате двух этапов: первый этап – кристаллизация перидотивного расплава и образование дифференцированного расслоенного массива типа стратиформных интрузивов в подкоровых глубинах земной коры или верхней мантии, второй этап – протрузивное проникновение консолидированных массивов по глубинным разломам и залегание в мезозойских структурах области альпинотипной складчатости. Слоистые и полосчатые структуры дунит-гарцбургитов в процессе внедрения и интенсивной серпентинизации не сохранились, а рудные тела хромитов различной формы раздроблены, разобщены и рассеяны в тектонизированных гипербазитах. Тектонические блоки гипербазитов и массивных руд, оторванные и перемещенные во время протрузивного внедрения по глубинным разломам, являются реликтами более крупных тел. В результате этих процессов месторождения и проявления хромитов в протрузивных массивах Севанской офиолитовой зоны являются незначительными по размерам и обнаружить закономерность в их размещении практически невозможно.

H. P. GUYUMGYAN, Sh. V. KHACHATRYAN, I. V. BAGHOYAN

OCCURRENCE AND SPECIFICS OF CHROMITE ORES
IN THE PROTRUSIVE DUNITE-PERIDOTITE MASSIVES
OF THE SEVAN OPHIOLITE ZONE

Summary

The hyperbazite massives of the Sevan ophiolite zone have been formed during two stages: first stage – the crystallization of the under crustal and upper mantle peridotite magma with the formation of differentiated layered massive of stratiform intrusion type; second stage – the protrusive intrusion of the consolidated massives through the deep faults and its occurrence in the Mesozoic structures of the alpine circle regions. The layering and dark streak pattern structure of the dunite-harzburgite massives as a result of protrusive intrusion and intensive serpentinitation have not been preserved, and the broken and isolated chromite ore bodies are being scattered in the tectonised hyperbazites. The tectonic blocks of the hyperbazites and of massive ores, which had been broken and moved during the protrusive intrusion by the deep faults, are the relicts of the biggest bodies. Due to these processes the occurrence and manifestations of chromites are scarce in the protrusive massives of the Sevan ophiolite zone, and to expect those regularities of allocations practically is impossible.